ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 111 Ա

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել 20-ը սեպտեմբերի 2023թ. ավագանու թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.25-ը հունվարի 2023 թվականի «Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին,

4.Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022 թվականի թիվ 134Ա և 16/07/2023թ. թիվ 100Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին,

5.Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին,

6.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,4հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

7.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,17305հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

8.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող N 25072023-10-0005, N 25072023-10-0010, N 25072023-10-0012 համարների վկայականներով անշարժ գույքերը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի» Մխիթար Սեբաստացի կրթահամալիր ՊՈԱԿ-ին անհատույց, անժամկետ (մշտական) օգտագործման տրամադրելու մասին,

9.Քաղաքացի Ռուդիկ Ռոբերտի Հակոբյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

10.Քաղաքացի Աղասի Ղուկասի Խանոյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

11.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային

սեփականություն հանդիսացող 0,4194հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

12.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,103հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

13.Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

14.Քաղաքացի Սուսաննա Թորգոմի Բեգլարյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

15.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

16.Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

17.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղում հանքարդյունահանման նպատակով «Մենդիա ռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից իրականացված ապօրինի աշխատանքների դադարեցման և պատճառված վնասների փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչության մարմնին, Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գրությամբ՝ կից հիմնավորումով դիմելու մասին,

18.Եղեգիս համայնքի համար արտաբյուջետային հաշիվ բացելու համաձայնություն տալու մասին:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 112 Ն

### *25-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Եղեգիս համայնքի 25 հունվարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 04 դաս 01 ծրագիր 52՝ արտաքին լուսավորության ցանց ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112-շենքերի և շինությունների շինարարություն հոդվածից 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,

բ.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 11 խումբ 01 դաս 02 ծրագիր 51՝ համայնքների պահուստային միջոցներ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891-պահուստային միջոցներ հոդվածից 1000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ,

ավելացնել՝

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 ծրագիր 51՝ ոռոգման ցանցի կառուցում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112-շենքերի և շինությունների շինարարություն հոդվածին՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Աղնջաձոր գյուղի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների ֆինանսավորման համար:

բ.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 ծրագիր 51՝ ջրամատակարարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112-շենքերի և շինությունների շինարարություն հոդվածին 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Վարդահովիտ գյուղի խմելու ջրի ջրագծերի կառուցման աշխատանքների ֆինանսավորման համար:

գ.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 04 դաս 01 ծրագիր 51՝ ճանապարհային տրանսպորտ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4239-

ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ Գետափ-Մարտունի միջպետական ճանապարհի վերանորոգման արդյունքում գոյացած երկրորդային ասֆալտով՝ միջբնակավայրային ճանապարհների հարթեցման նպատակով:

2)Պակասեցնել՝

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 04 դաս 01 ծրագիր 52՝ արտաքին լուսավորության ցանց ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածից 3 00 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 01 ծրագիր 55՝ գյուղատնտեսություն ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածից 3 00 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

ավելացնել՝

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 04 դաս 01 ծրագիր 52՝ ճանապարհային տրանսպորտ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին 6 00 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

3)Պակասեցնել՝

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 10 խումբ 04 դաս 01 ծրագիր 51՝ ընտանիքի անդամներ և զավակներ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729-այլ նպաստներ բյուջեից հոդվածից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

ավելացնել՝

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 10 խումբ 07 դաս 01 ծրագիր 51՝ սոցիալապես անապահով ընտանիքներին տրվող սոցիալական օգնություն ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729-այլ նպաստներ բյուջեից հոդվածին 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

| Կողմ՝ 7 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 1 |
|---|---|---|
| Ստեփանյան Արթուր ***բացակա*** | | Մարտիրոսյան Զոյա |
| Մարտիրոսյան Նարեկ | | |
| Հակոբյան Արտուշ | | |
| Պողոսյան Հրաչյա | | |
| Մանուկյան Սաթինե | | |
| Նազարյան Արգիշտի | | |
| Ղահրամանյան Վարդան | | |
| Գաբրիելյան Ահարոն | | |
| Բաբայան Վահե ***բացակա*** | | |
| Սմբատյան Մամիկոն ***բացակա*** | | |
| Հարությունյան Կարեն ***բացակա*** | | |
| Սմբատյան Արսեն ***բացակա*** | | |
| Միքայելյան Քրիստինա ***բացակա*** | | |
| Ստեփանյան Սաշա ***բացակա*** | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 113 Ա

### *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

1.Համաձայնություն տալ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Եղեգիս համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Աիարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված 1, 20-ը սեպտեմբերի 2023թ. ավագանու թիվ 113-Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև N 22

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2022թ.)

Մարզ: Վայոց Ձոր (անվանում) — 10 (կոդ)

Համայնք: Եղեգիս (անվանում) — 846 (կոդ)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը ∑2+3+4+8+12 | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | Համայնքային: ընդամենը (5+6+7) | Համայնքային: օտարման ենթակա չէ | Համայնքային: օգտագործման տրված | Համայնքային: օգտագործման չտրված | Պետական: ընդամենը (9+10+11) | Պետական: օտարման ենթակա չէ | Պետական: օգտագործման տրված | Պետական: օգտագործման չտրված | Օտարերկրյա պետությունների, ոչ ՀՀ քաղաքացիների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 1961.17 | 1067.62 | 2.05 | 881.20 | | 129.74 | 751.46 | 10.30 | | | 10.30 | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, | | 88.60 | 84.11 | 0.96 | 3.53 | | 2.44 | 1.09 | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ | | 77.65 | 74.12 | | 3.53 | | 2.44 | 1.09 | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 10.95 | 9.99 | 0.96 | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 1878.95 | 776.65 | | 934.23 | 33.60 | 130.92 | 769.71 | 168.07 | | 45.00 | 123.07 | |
| 1.4 | | արոտ | | 24836.47 | 253.92 | 31.80 | 10673.98 | 1811.70 | 5685.19 | 3177.09 | 13876.78 | | 6472.65 | 7404.13 | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 14626.72 | 67.81 | 3.23 | 11104.87 | 2553.70 | 415.28 | 8135.89 | 3450.81 | | 502.87 | 2947.94 | |
| 1 | | Ընդամենը | | 43391.90 | 2250.10 | 38.04 | 23597.80 | 4399.00 | 6363.57 | 12835.23 | 17505.96 | | 7020.52 | 10485.44 | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի | | 618.68 | 618.40 | 0.27 | 0.01 | | | 0.01 | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ | | 618.67 | 618.40 | 0.27 | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 33.00 | 5.69 | 0.25 | 2.54 | 1.11 | | 1.43 | 24.52 | 2.36 | | 22.16 | |
| 2.3 | | խառը | | 0.12 | | | 0.12 | | | 0.12 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր | | 82.32 | | | 82.32 | | | 82.32 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 137.79 | 1.47 | | 136.32 | | 0.30 | 136.02 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 871.91 | 625.56 | 0.52 | 221.31 | 1.11 | 0.30 | 219.90 | 24.52 | 2.36 | | 22.16 | |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. | արդյունաբերության | | 1.67 | | | 1.67 | | | 1.67 | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական, | | 28.82 | 3.52 | | 25.29 | | 0.78 | 24.51 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | 0.07 | | | 0.07 | | | 0.07 | | | | | |
| 3.4 | | ընդերքօ | | 24.23 | | | | | | | 24.23 | | | 24.23 | |
| 3 | | Ընդամենը | | 54.79 | 3.52 | | 27.03 | | 0.78 | 26.25 | 24.23 | | | 24.23 | |
| 4.1 | 4. Էներգետիկ. կապի, տրանսպ. | էներգետիկայի | | 13.39 | 1.29 | 8.38 | 3.62 | | 1.66 | 1.96 | 0.10 | | 0.10 | | |
| 4.2 | | կապի | | 0.61 | 0.04 | 0.12 | 0.45 | | 0.05 | 0.40 | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 44.21 | | 0.01 | | | | | 44.20 | | | 44.20 | |
| 4.4 | | կոմունալ | | 18.12 | | 6.43 | 3.00 | | 1.19 | 1.81 | 8.69 | | 6.43 | 2.26 | |
| 4 | | Ընդամենը | | 76.33 | 1.33 | 14.94 | 7.07 | | 2.90 | 4.17 | 52.99 | | 6.53 | 46.46 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցն | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | 0.79 | | | 0.79 | | | 0.79 | | | | | |
| 5.4 | | պատմական և | | 100.60 | | | 22.46 | | | 22.46 | 78.14 | 2.35 | | 75.79 | |
| 5 | | Ընդամենը | | 101.39 | | | 23.25 | | | 23.25 | 78.14 | 2.35 | | 75.79 | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 2465.29 | | | | | | | 2465.29 | | | 2465.29 | |
| 7.2 | | թփուտ | | 96.50 | | | | | | | 96.50 | | | 96.50 | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | 35.26 | | | | | | | 35.26 | | | 35.26 | |
| 7.5 | | արոտ | | 286.12 | | | | | | | 286.12 | | | 286.12 | |
| 7.6 | | այլ հողեր | | 91.13 | | | | | | | 91.13 | | | 91.13 | |
| 7 | | Ընդամենը | | 2974.30 | | | | | | | 2974.30 | | | 2974.30 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 125.47 | | | | | | | 125.47 | | 0.03 | 125.44 | |
| 8.2 | | ջրամբարներ | | 14.48 | | | 14.48 | | | 14.48 | | | | | |
| 8.3 | | լճեր | | 6.71 | 0.07 | | 6.64 | | | 6.64 | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 45.09 | | | 44.61 | | 0.10 | 44.51 | 0.48 | | | 0.48 | |
| 8.5 | | հիդրոտեխ. և | | 1.09 | | | 1.09 | | 0.21 | 0.88 | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 192.84 | 0.07 | | 66.82 | | 0.31 | 66.51 | 125.95 | | 0.03 | 125.92 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 47663.46 | 2880.58 | 53.50 | 23943.29 | 4400.11 | 6367.86 | 13175.32 | 20786.09 | 4.71 | 7027.08 | 13754.30 | |

Համայնքի ղեկավար Ռ. Ալեքսանյան

Հավելված 2.
20-ը սեպտեմբերի 2023թ.
ավագանու թիվ 113Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև 22ա

## Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների)

Մարզ[a] Վայոց Ձոր (անվանումը) 10 (կոդ)

Համայնք[a] Եղեգիս (անվանումը) 846 (կոդ)

| NN | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն, հողատեսք | կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր Σ2+3+4+5+6 | Սեփականության սուբյեկտ: ՀՀ պետական | ՀՀ համայնքային | քաղաքացիների | իրավաբանական անձանց | Օտարերկրյա պետությունների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 489.1 | 365.9 | 2.1 | 121.2 | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, | | 88.7 | 84.2 | 1.0 | 3.6 | | |
| 1.2.1 | | այդ թվում[a] պտղատու այգի | | 77.7 | 74.2 | | 3.6 | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 11.0 | 10.0 | 1.0 | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 69.2 | 41.4 | | 27.8 | | |
| 1.4 | | արոտ | | | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 647.0 | 491.5 | 3.0 | 152.5 | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 328.2 | 328.2 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 328.2 | 328.2 | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2.2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2.3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 328.2 | 328.2 | | | | |
| 3 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ Σ1+2+3+4+5+6+7+9 | | | | 975.2 | 819.6 | 3.0 | 152.5 | | |

Համայնքի ղեկավար՝ ______________ /ստորագրություն, կնիք/

կատարող՝ ______________ /ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 114 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/12/2022 Թ. ԹԻՎ 134Ա ԵՎ 16/07/2023 Թ. ԹԻՎ 100Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 134Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գաբրիելյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

արձանագրող՝ Ա. Արտաշյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

անդամներ՝ Ռ. Ոսկանյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Ա. Սիմոնյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Հ. Պողոսյան -համայնքի ավագանու անդամ:

2.Մրցութային գործընթացում սակարկություններն իրականացնող (աճուրդավար) նշանակել Ա. Սիմոնյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 16-ի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 100Ա որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ «ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Արտաբույնք գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արտյոմ Արմենի Սետրակյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից (0,64843հա մակերեսով, 10-010-0120-0047 կադաստրային ծածկագրով) առանձնացված 0.116հա հողատարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:»:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---


Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 115 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 23/08/2023թ. թիվ188Ա որոշումը, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25072023-10-0005, N25072023-10-0010, N25072023-10-0012 համարների վկայականներով գույքերը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 116 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,4 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.
կադաստրային ծածկագիր 10-021-0107- , մակերեսը 1,4հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 300 (երեք հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

| Կողմ՝ 0 | Դեմ՝ 8 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|
| Ստեփանյան Արթուր ***բացակա*** | Մարտիրոսյան Նարեկ | |
| Բաբայան Վահե ***բացակա*** | Մարտիրոսյան Զոյա | |
| Սմբատյան Մամիկոն ***բացակա*** | Հակոբյան Արտուշ | |
| Հարությունյան Կարեն ***բացակա*** | Պողոսյան Հրայա | |
| Սմբատյան Արսեն ***բացակա*** | Մանուկյան Սաթինե | |
| Միքայելյան Քրիստինա ***բացակա*** | Նազարյան Արգիշտի | |
| Ստեփանյան Սաշա ***բացակա*** | Ղահրամանյան Վարդան | |
| | Գաբրիելյան Ահարոն | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 117 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,17305 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.
կադաստրային ծածկագիր 10-021-0009- , մակերեսը 1,17305հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 300 (երեք հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 118 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ N 25072023-10-0005, N 25072023-10-0010, N 25072023-10-0012 ՀԱՄԱՐՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N25072023-10-0005, N25072023-10-0010, N25072023-10-0012 համարների վկայականներով անշարժ գույքերը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ին:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Աիարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 119 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԴԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 12-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Ռուդիկ Ռոբերտի Հակոբյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքից (0,69037հա մակերեսով, 10-035-0255-0018 կադաստրային ծածկագրով) առանձնացված 0.06175հա հողատարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (ինքնակամ կառուցված շինության օրինականացման նպատակով):

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Աիարոն
Բաքայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 120 Ա

## *ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՂՈՒԿԱՍԻ ԽԱՆՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

1.Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Աղասի Ղուկասի Խանոյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0233-0004, մակերեսը՝ 1 (մեկ) հա նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ կառուցելու համար:

2.Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 121 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,4194 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին՝ կադաստրային ծածկագիր 10-035-0231-0074, մակերեսը 0,4194հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 120 (մեկ հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

| Կողմ՝ 0 | Դեմ՝ 8 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|
| Ստեփանյան Արթուր ***բացակա*** | Մարտիրոսյան Նարեկ | |
| Բաբայան Վահե ***բացակա*** | Մարտիրոսյան Զոյա | |
| Սմբատյան Մամիկոն ***բացակա*** | Հակոբյան Արտուշ | |
| Հարությունյան Կարեն ***բացակա*** | Պողոսյան Հրաչյա | |
| Սմբատյան Արսեն ***բացակա*** | Մանուկյան Սաթինե | |
| Միքայելյան Քրիստինա ***բացակա*** | Նազարյան Արգիշտի | |
| Ստեփանյան Սաշա ***բացակա*** | Ղահրամանյան Վարդան | |
| | Գաբրիելյան Աhարոն | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 122 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,103 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին՝ կադաստրային ծածկագիր 10-035-0040-0041, մակերեսը 0,103հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 120 (մեկ հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

| Կողմ՝ 0 | Դեմ՝ 8 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|
| Ստեփանյան Արթուր ***բացակա*** | Մարտիրոսյան Նարեկ | |
| Բաբայան Վահե ***բացակա*** | Մարտիրոսյան Զոյա | |
| Սմբատյան Մամիկոն ***բացակա*** | Հակոբյան Արտուշ | |
| Հարությունյան Կարեն ***բացակա*** | Պողոսյան Հրաչյա | |
| Սմբատյան Արսեն ***բացակա*** | Մանուկյան Սաթինե | |
| Միքայելյան Քրիստինա ***բացակա*** | Նազարյան Արգիշտի | |
| Ստեփանյան Սաշա ***բացակա*** | Ղահրամանյան Վարդան | |
| | Գաբրիելյան Ահարոն | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 123 Ա

***ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ևփոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 17/07/2023թ. N2/փ-197 դրական եզրակացությունը

***ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Սալլի գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արմեն Ավետիկի Հայրապետյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսք հողատեսքից (0,41495հա մակերեսով, 10-038-0116-0033 կադաստրային ծածկագրով, որից՝ 0,188հա վարելահող և 0,22695հա այլ հողատեսք) առանձնացված 0,3հա (որից՝ 0,188հա վարելահող և 0,112հա այլ հողատեսք) հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 124 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԹՈՐԳՈՄԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 12-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հերմոն գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Սուսաննա Թորգոմի Բեգլարյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, արոտավայր հողատեսքից (0,49285հա մակերեսով, որից՝ 0,22501հա այլ հողատեսք և 0,26784հա արոտավայր, 10-029-0120-0015 կադաստրային ծածկագրով) առանձնացված 0.125հա հողատարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (ինքնակամ կառուցված շինության օրինականացման նպատակով):

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

| Կողմ՝ 8 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ __ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ__

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ Ու Մ***

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 125 Ա

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
20-ը սեպտեմբերի 2023թ. թիվ 125 Ա որոշման

1. Գևորգ Սուրիկի Խաչատրյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
2. Արա Նորիկի Ավագյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
3. Ոսկան Շաշայի Նազարյան 25 000 ՀՀ դրամ գ.Շատին
4. Հասմիկ Արայի Հայրապետյան 20 000 ՀՀ դրամ գ. Սալլի
5. Սվետլանա Արթուրի Մարտիրոսյան 20 000 ՀՀ դրամ գ. Հերմոն

Ընդամենը՝ 125 000 /մեկ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

Հավելված 2
Եղեգիս համայնքի ավագանու
20-ը սեպտեմբերի 2023թ. թիվ 125 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչների տրամադրել դրամական օգնություն՝ յուրաքանչյուր նորածին երեխայի խնամքի համար 30 000- ական ՀՀ դրամ

1. Անի Արծրունի Նազարյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
2. Սիլվա Մամիկոնի Գրեյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
3. Վարդան Ազատի Սմբատյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
4. Գոհար Սամսոնի Գևորգյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
5. Հակոբ Դերենիկի Հակոբյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
6. Իզա Արթուրի Նազարյան 30000 ՀՀ դրամ գ. Հորս
7. Գարիկ Նորիկի Կարապետյան 30000 ՀՀ դրամ գ. Հորս
8. Գոհար Աղաջանի Մինասյան 30000 ՀՀ դրամ գ.Վարդահովիտ
9. Մարգարիտա Սերյոժայի Մաթևոսյան 30000 ՀՀ դրամ գ. Աղնջաձոր
10. Իրինա Մանուկի Գրիգորյան 30000 ՀՀ դրամ գ. Թառաթումբ
11. Թերեզա Վանիկի Գրիգորյան 30000 ՀՀ դրամ գ. Թառաթումբ
12. Նազելի Աշոտիկի Մանուկյան 30000 ՀՀ դրամ գ.Քարագլուխ
13. Սամվել Աշոտի Կարապետյան 30000 ՀՀ դրամ գ. Քարագլուխ

Ընդամենը՝ 390 000 /երեք հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 126 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը 15:00-ին:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 127 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՐՈՒԹՅԱՄԲ՝ ԿԻՑ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՈՎ, ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մենդիա Ռեսուրսիս» ՍՊԸ-ն ապօրինի ճանապարհաշինարարական աշխատանքներ է իրականացրել Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղում, ճանապարհ է հարթել մոտ 5 կմ երկարությամբ, մոտ 6 մ լայնությամբ, 2,5 մ բարձրությամբ՝ այդկերպ խախտելով արոտավայրերի օգտագործման պայմանները, ալպիական մարգագետինների հողի բերրի շերտի ծածկույթի ամբողջականությունը՝ մեծ ծավալով և վնասել հողի բերրի շերտը՝ մեծաքանակ տարածքով: Նոր բացված ճանապարհը հատում է լեռների լանջերը, որոնք ներառված են վայրի կենդանիների տեղաշարժման էկոմիջանցքներում:

Տարածքը հանդիսանում է Եղեգիս համայնքի հիմնական արոտավայրը, որտեղ իրենց անասուններն են արածեցնում նաև հարևան համայնքների բնակիչները և ունի տարատեսակ խոտաբույսերի հարուստ պաշար, ինչը գյուղացիների համար գարնան-ամռան ամիսներին հանդիսանում է հիմնական եկամտի աղբյուր:

Համայնքի ջրային աղբյուրները գտնվում են նշված տարածքի ներքին հատվածում: Այդպիսով՝ բացված ճանապարհը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին, ինչը խախտում է «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջները:

Համայնքը ճանապարհի կառուցման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ստացել: Հիշյալ տարածքի՝ հատկապես հողի բերրի շերտի վերականգնումը գրեթե անհնար է, կամ պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր:

Նշենք, որ նման ծավալի ավերիչ շինարարության համար հիմք է հանդիսացել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. դեկտեմբերի 9-ին «Մենդիա ռեսուրսիս» ՍՊԸ-ի Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման (ՇՄԱԳ) հայտին տրված դրական եզրակացությունը, որ կազմվել է փաստերի բազմաթիվ աղավաղումներով և օրենսդրության խախտումներով.

1.2022թ. հոկտեմբերի 14-ին Եղեգիս համայնքում նշանակված են եղել նախագծի վերաբերյալ հանրային լսումներ, որոնք սկսվել են լարված մթնոլորտում, քանի որ բնակիչներն և ավագանու անդամները դեմ են եղել նախագծին, և Եղեգիս համայնքի ղեկավարը հայտարարել է, որ լսումները համարում է չկայացած, որովհետև խախտվել են ՀՀ կառավարության 19.11.2014 թվականի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշման դրույթները, և 10-ը հոկտեմբերի 2018 թվականի ՀՀ կառավարության N1146-Ն որոշումը՝ «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», որի 5-րդ կետի պահանջներով նշված է. «Հանրային քննարկումները իրականացվում են՝ հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության հիման վրա»:

Նշված փաթեթում չեն արձանագրվել նաև ազդակիր համայնքների ցանկը, սակայն փաստացի առկա են Արենի և Եղեգնաձոր համայնքների՝ համապատասխանաբար յոթ և չորս բնակավայրեր, որոնց ամբողջ հողատարածքներն ոռոգվում են բազմամետաղների հանքերևակման տեղամասից կուտակված ջրային պաշարներից:

Դա արտացոլված է տեսաձայնագրության մեջ և Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին հասցեագրված նամակում: Սակայն եզրակացության մեջ հաշվի առնված չէ Եղեգիս համայնքի բնակիչների նախագծի վերաբերյալ դեմ հայտարարված կարծիքը:

2.Փորձաքննության ներկայացված փաստաթղթերը ներկայացված չեն եղել հիմնական շահագրգիռ կողմին՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

3.Փորձաքննական եզրակացությունն անդրադառնում է միայն ընկերության կողմից ներկայացված ՇՄԱԳ հայտում տեղ գտած գնահատականներին՝ չիրականացնելով իր կողմից ՇՄԱԳ-ի մասին օրենքով պարտադրված գնահատումը:

4.Եզրակացության մեջ գնահատված չեն տարածքում գտնվող ջրային աղբյուրների,

կենսաբազմանության՝ այդ թվում Կարմիր գրքում գրանցված տեսակների համար առկա ռիսկերը: Նշենք, որ կենսաբազմազանության պահպանման համար տարածքում գործում են երկու՝ WWF-Հայաստան և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամները: Փաստաթղթերը չեն ներկայացվել նրանց՝ որպես ուղիղ շահագրգիռ կողմեր:

Այդպիսով խախտվել է.

1.ՀՀ հողային օրենսգրքի 96-րդ հոդվածը, ըստ որի՝ արոտավայրերը վարձակալությամբ տրամադրվում են անասնապահությամբ զբաղվելու պայմանով:

2.ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը» հավելվածի առաջին կետը, որի 3) ենթակետով սահմանված է՝

-թույլատրվում է գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի՝ ճանապարհների, էլեկտրահաղորդման և կապի գծերի կամ ենթակայանների, գազատարների և այլ խողովակաշարերի, երկաթուղային գծերի, ցամաքուրդների և այլ նմանատիպ օբյեկտների կառուցման և սպասարկման դեպքում,

իսկ 8-րդ ենթակետով՝

- ընդերքօգտագործման աշխատանքների՝ օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն անցած ծրագրի և (կամ) նախագծի առկայությամբ:

3.Հողային օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է հողերի պահպանության խնդիրներն են՝

3) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանումը, պահպանումը և օգտագործումը:

5-րդ մասով՝

-շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և օգտագործվում է պակաս արդյունավետ հողերի բարելավման համար:

4.8-ը սեպտեմբերի 2011թ. N 1396-Ն ՀՀ Կառավարության որոշումը՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» :

Վարդահովիտ գյուղի դեպքում ընդերքի օգտագործում չէ, այլ՝ ընդերքի ուսումնասիրություն և այնտեղ արծանագրված ճանապարհաշինարարական աշխատանքներն ապօրինի են: Խախտվել են ինչպես ՀՀ Հողային օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, այնպես էլ ՀՀ կառավարության 8-ը սեպտեմբերի 2011թ. N 1396-Ն որոշման պահանջները: Երկու դեպքում էլ պահանջվում էր ավագանու համապատասխան որոշումը, որը բացակայում է:

3.Համաձայն ՀՀ ՏԻ մասին օրենքի 43-րդ հոդվածի՝

1.Համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

3) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.

4) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում (բացառությամբ իրավաբանական անձանց մասնավորեցման (սեփականաշնորհման), կառուցապատված հողամասերի, կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքով առանձնացված՝ չկառուցապատված հողամասերի, ինչպես նաև պետական կամ ենթակա պետական մարմիններին հանձնված (ամրացված) և օտարման առաջարկվող պետական հողամասերի) կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասով, Եղեգիս համայնքի ավագանին որոշում է՝

1.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղական բնակավայրում հանքարդյունահանման նպատակով «Մենդիա ռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից իրականացված ապօրինի աշխատանքների դադարեցման և պատճառված վնասների փոխհատուցման համար գրությամբ դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետին, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչության մարմիններին, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարությանը՝ կից հիմնավորումներով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-ը սեպտեմբերի 2023 թվականի N 128 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ, 6)-րդ կետերով, 92-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի, հաշվի առնելով Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համաֆինանսավորվող Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի շրջանակում հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում ֆինանսավորման արժանացած «Աղնջաձոր և Շատին գյուղերի ոռոգման համակարգերի կառուցում» ծրագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գոր-ծող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի շրջանակներում Եղեգիս համայնքում՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ գանձապետական համակարգում ՀՀ դրամի արտաբյուջետային հաշիվ բացելու:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր ***բացակա***
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Աhարոն

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ